

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ
1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ք. Երևան

04.07.2017թ.

«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով ՀՀ կրթության պետական տեսչությանը վերապահված լիազորությունների շրջանակներում, ի կատարումն ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2016 թվականի դեկտեմբերի 23-ի №1335-Ա/2 հրամանով հաստատված ՀՀ կրթության պետական տեսչության 2017 թվականի աշխատանքային ծրագրի, իրականացվել են.

1. Ստուգումներ ՀՀ մարզերի թվով 13 նախադպրոցական ուսումնական հաստատություններում

Հիմքը՝

ՀՀ կրթության պետական տեսչության 2017 թվականի աշխատանքային ծրագիրը, ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի 30.12.2016թ. N 68-Ա կարգադրությամբ հաստատված 2017թ. ստուգումների ժամանակացույցը և 07.03.2017թ. N01-Ա, 15.03.2017թ. N02-Ա, 04.05.2017թ. N04-Ա հանձնարարագրերը:

Նպատակը՝

Վերլուծել, գնահատել նախադպրոցական ուսումնական հաստատությունների կրթական գործունեության ռիսկայնությունը, ձևավորել տվյալների բազա:

Ժամկետը՝

20.03.2017թ.-24.03.2017թ. (ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի թվով 3 մանկապարտեզներ),
 27.03.2017թ.- 05.04.2017թ. (ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք և Եղեգնաձոր համայնքների թվով 5 մանկապարտեզներ),
 22.05.2017թ.-26.05.2017թ. (ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան և Եղվարդ համայնքների թվով 5 մանկապարտեզներ):

Ստուգման արդյունքները՝

Ստուգումների արդյունքում 13 մանկապարտեզներում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է թվով 13 ակտ:

Ըստ ստուգաթերթերի ամփոփ տվյալների մանկապարտեզների կրթական գործունեության ռիսկերն ունեն հետևյալ պատկերը.

<i>h/h</i>	<i>Մանկապարտեզի կրթական գործունեության ռիսկն ըստ ստուգաթերթերի (միավոր)</i>	<i>Մանկապարտեզի անվանումը</i>
1.	3,8	Եղեգնաձորի հ. 5 մանկապարտեզ
2.	4	Վեդիի հ. 3 մանկապարտեզ

3.	4,8	Եղեգնաձորի հ. 1 մանկապարտեզ
4.	5	Եղեգնաձորի հ. 2 մանկապարտեզ
5.	6	Վեդիի հ. 1 մանկապարտեզ
6.	6,5	Չարենցավանի «Հրաշք» մանկապարտեզ
7.	8,5	Վեդիի հ. 2 մանկապարտեզ
8.	9,5	Եղվարդի հ. 1 մանկապարտեզ
9.	11	Չարենցավանի «Հեքիաթ» մանկապարտեզ
10.	12,5	Չարենցավանի «Չանգակ», «Լուսաբաց» մանկապարտեզներ
11.	14,5	Վայքի հ. 3 մանկապարտեզ
12.	21,5	Վայքի հ.1 մանկապարտեզ

Մանկապարտեզների ստուգման արդյունքում արձանագրվել են հետևյալ բնույթի խախտումներ.

<i>h/h</i>	<i>Խախտման բնույթը</i>	<i>Մանկապարտեզի անվանումը</i>
1.	Մանկապարտեզը չունի նախադպրոցական կրթական ծրագիր իրականացնելու լիցենզիա	Վեդիի հ.հ. 1,3, Վայքի հ. 1, Չարենցավանի «Չանգակ», «Լուսաբաց», «Հրաշք», «Հեքիաթ», Եղվարդի հ. 1, Եղեգնաձորի հ.հ. 1, 2, 5 մանկապարտեզներ
2.	ՆՈՒՀ-ի կանոնադրությունը չի համապատասխանում օրինակելի կանոնադրության պահանջներին	Վեդիի հ.հ. 1,2,3, Վայքի հ.հ. 1, 3, Չարենցավանի «Չանգակ», «Լուսաբաց», «Հրաշք», «Հեքիաթ» մանկապարտեզներ
3.	Մանկապարտեզների հաստիքացուցակով և պաշտոնային դրույքաչափերով մանկավարժական աշխատողներին հարկացվել է (կամ չի հարկացվել) սահմանված նորմի խախտումով հաստիքային միավոր	Վեդիի հ.հ. 1, 2, 3, Վայքի հ. 1 մանկապարտեզ, Չարենցավանի «Չանգակ», «Լուսաբաց», «Հրաշք», «Հեքիաթ» , Եղեգնաձորի հ.հ. 1, 2 մանկապարտեզներ
4.	Խմբերի գերբեռնվածություն	Վեդիի հ.հ. 1, 2, 3, Վայքի հ.հ. 1,3, Չարենցավանի «Լուսաբաց», «Հրաշք», «Հեքիաթ» , Եղեգնաձորի հ. 1 մանկապարտեզներ
5.	Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչների որակական պահանջների խախտում	Վեդիի հ. 2, Վայքի հ.հ. 1,3 , Չարենցավանի«Լուսաբաց», Եղվարդի հ. 1 մանկապարտեզներ
6.	Մանկավարժական աշխատողների նշանակում	Վայքի հ.հ. 1,3, Չարենցավանի «Չանգակ», «Լուսաբաց», «Հրաշք», «Հեքիաթ», Եղվարդի հ. 1, Եղեգնաձորի հ. 2 մանկապարտեզներ
7.	Մանկավարժական աշխատողները վերջին 5 տարում չեն մասնակցել վերապարաստման	Վեդիի հ. 2 , Վայքի հ.հ. 1,3, Չարենցավանի «Չանգակ», «Լուսաբաց», «Հեքիաթ», Եղեգնաձորի հ. հ. 1,2 մանկապարտեզներ
8.	Ավագ խմբի համակազմում ընդգրկված է դպրոցահասակ երեխա	Վեդիի հ. 1, Վայքի հ.հ. 1,3 , Չարենցավանի «Չանգակ», «Լուսաբաց» , Եղեգնաձորի հ. 5 մանկապարտեզներ
9.	Ներքին կարգապահական կանոնների առկայություն	Վայքի հ. 3 մանկապարտեզ
10.	Երեխաների զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջներ	Վայքի հ. 1, Եղեգնաձորի հ. 1 մանկապարտեզներ
11.	Մանկավարժական աշխատողների պաշտոնային պարտականությունների ոչ պարզաճ կատարում	Վայքի հ.հ. 1,3 մանկապարտեզներ
12.	Մանկապարտեզի կրթական համալիր ծրագրերի պահանջներ	Վայքի հ. 3 մանկապարտեզ
13.	Մանկապարտեզի երեխաների	Վայքի հ. 1, Չարենցավանի «Չանգակ», «Լուսաբաց»

	<i>հրամանագրքում և շարժի մատյանում նշված տեղեկատվության անհամապատասխանություն</i>	<i>մանկապարտեզներ</i>
14.	<i>Համակազմի լիցենզիայով ամրագրված սահմանային թվերի գերազանցում</i>	<i>Վեդիի հ. 2 մանկապարտեզ</i>
15.	<i>Մանկապարտեզը չունի երաժշտական դահլիճ</i>	<i>Եղեգնաձորի հ. 5 մանկապարտեզ</i>

Ստուգման արդյունքների վերաբերյալ տեղեկանքները հրապարակվել են <http://www.edu.am> կայքում:

Ձեռնարկված միջոցառումներ

Ստուգման արդյունքները ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարներին, ՀՀ Արարատի, Վայոց ձորի, Կոտայքի մարզպետներին, Վեդի, Վայք, Եղեգնաձոր, Չարենցավան, Եղվարդ համայնքների ղեկավարներին: Համաձայն «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ հայտնաբերված խախտումների հետևանքները վերացնելու նպատակով, ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի կողմից նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրեններին տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ:

2. ՀՀ Արարատի մարզի Վեդիի, ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի, Եղեգնաձորի, ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի, Չարենցավանի համայնքապետարանների աշխատակազմերի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում ուսումնասիրություններ

Հիմքը՝

ՀՀ կրթության պետական տեսչության՝ 2017 թվականի աշխատանքային ծրագիրը, ՀՀ կրթության տեսչության պետի՝ 07.03.2017թ. № 16-Ա, 15.03.2017թ. № 19-Ա, 04.05.2017թ. N 39-Ա կարգադրությունները:

Նպատակը՝

ՀՀ կրթության բնագավառի օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողության ապահովում:

Ժամկետը՝

20.03.2017թ.-24.03.2017թ. (ՀՀ Արարատի մարզի Վեդիի համայնքապետարան),
 27.03.2017թ.-05.04.2017թ. (ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի համայնքապետարան),
 27.03.2017թ.-07.04.2017թ. (ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի համայնքապետարան),
 22.05.2017թ.-26.05.2017թ. (ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի, Չարենցավանի համայնքապետարաններ),

Ուսումնասիրության արդյունքները՝

Ուսումնասիրությամբ ընդգրկվող ժամանակաշրջան է սահմանվել 2014թ. սեպտեմբերի 1-ից մինչև ուսումնասիրությունն սկսելու օրը:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է.

N	Խախտման բնույթը	Համայնքապետարանը
1.	Աշխատակազմի կանոնադրությունում ներառված չեն կրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերով տեղական ինքնակառավարման մարմինն և համայնքի ղեկավարին վերապահված լիազորություններն ու գործառույթները:	Եղեգնաձորի, Չարենցավանի, Եղվարդի, Վայքի համայնքապետարաններ
2.	Աշխատակազմը կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանում չունի: Աշխատակազմում կրթության հարցերով զբաղվող մասնագետ կամ համակարգող չկա:	Եղեգնաձորի, Վայքի համայնքապետարաններ
3.	Համայնքապետարանի աշխատակազմում կրթության և մշակույթի հարցերով զբաղվող բաժինը չունի կանոնադրություն:	Վեդիի, Եղվարդի համայնքապետարաններ
4.	Կրթության բնագավառի աշխատանքները համակարգող մասնագետի պաշտոնի նկարագրում նշված գործառույթները չեն ներառում կրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերով տեղական ինքնակառավարման մարմինն վերապահված գործառույթների լիազորություններն ու իրավասությունները:	Վեդիի համայնքապետարան
5.	Ուսումնասիրությամբ ընդգրկվող ժամանակահատվածի տարեկան աշխատանքային ծրագրեր և կատարողականներ չեն ներկայացվել:	Եղեգնաձորի, Չարենցավանի, Եղվարդի, Վայքի համայնքապետարաններ
6.	Մանկապարտեզների կանոնադրությունները հաստատվել են համայնքապետի կողմից:	Վեդիի, Վայքի համայնքապետարաններ
7.	Մանկապարտեզների կանոնադրությունները չեն համապատասխանեցվել օրինակելի կանոնադրության պահանջներին:	Վեդիի, Չարենցավանի համայնքապետարաններ
8.	Մանկապարտեզների ղեկավար աշխատողների ընտրությունը, նշանակումը և (կամ) պաշտոնից ազատումը չի իրականացվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:	Վայքի համայնքապետարան
9.	Ուսումնասիրությամբ ընդգրկվող ժամանակահատվածում քաղաքապետարանի աշխատակազմի կողմից մանկապարտեզներում կրթադաստիարակչական աշխատանքների նկատմամբ լիարժեք վերահսկողություն չի իրականացվել:	Վեդիի, Եղեգնաձորի, Չարենցավանի, Եղվարդի, Վայքի համայնքապետարաններ
10.	Մանկապարտեզների հաստիքացուցակները չեն համապատասխանում օրինակելի հատիքացուցակի պահանջներին:	Վեդիի, Եղեգնաձորի, Չարենցավանի, Վայքի համայնքապետարաններ
11.	Ուսումնասիրությամբ ընդգրկվող ժամանակահատվածում աշխատակազմի կողմից մանկապարտեզներում փորձարարական և նորարարական գործունեության կազմակերպում պատշաճ ձևով չի իրականացվել:	Վեդիի, Եղեգնաձորի, Չարենցավանի, Եղվարդի, Վայքի համայնքապետարաններ
12.	Ուսումնասիրությամբ ընդգրկվող ժամանակահատվածում համայնքում նախադպրոցական տարիքի, երեխաների հաշվառում չի իրականացվել:	Եղեգնաձորի, Վայքի համայնքապետարաններ

Ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ ամփոփ հաշվետվությունները հրապարակվել են <http://www.edu.am> կայքում:

Ձեռնարկված միջոցառումներ

Ուսումնասիրության արդյունքները ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարին, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարին, ՀՀ Արարատի, Վայոց ձորի, Կոտայքի մարզպետներին, Վեդի, Վայք, Եղեգնաձոր, Չարենցավան, Եղվարդ համայնքների ղեկավարներին:

3. ՀՀ Գեղարքունիքի, Շիրակի մարզպետարանների կրթության, մշակույթի և սպորտի վարչություններում ուսումնասիրություններ

Հիմքը՝

ՀՀ կրթության պետական տեսչության՝ 2017թ. աշխատանքային ծրագրի 4-րդ կետը, ՀՀ կրթության պետական տեսչության պետի՝ 10.01.2017թ. N 01-Ա, 31.05.2017թ. N 59-Ա կարգադրությունները:

Նպատակը՝

«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի, 9-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերի, 13-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի պահանջների կատարումը:

Ժամկետը՝

23.01.2017թ.- 10.02.2017թ. (ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան),
19.06.2017թ.- 10.07.2017թ. (ՀՀ Շիրակի մարզպետարան):

Ուսումնասիրությունների արդյունքները՝

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում իրականացված ուսումնասիրության ժամանակ ուսումնասիրությամբ ընդգրկվող ժամանակահատված է ընդունվել 2013 թվականի օգոստոսի 20-ից մինչև 2017 թվականի հունվարի 22-ը:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է.

- 1) դպրոցը չունի կրթական գործունեության թույլտվություն՝ լիցենզիա (2 դպրոց):
- 2) դպրոցները գերազանցել են ՀՀ կրթության և գիտության նախարարի համապատասխան հրամաններով հաստատված՝ սովորողների սահմանային տեղերը (11 դպրոց):
- 3) դպրոցների 2015-2016 և 2016-2017 ուսումնական տարիների ուսումնական պլանների և 2015-2016 ուսումնական տարվա առարկայական ծրագրերի կատարողականի (8-րդ, 9-րդ և 11-րդ դասարաններ՝ ըստ դասաժամերի թվի) ուսումնասիրությունների արդյունքում խախտումներ են հայտնաբերվել մարզի 118 դպրոցներից 48-ում:
- 4) դասամատյանների ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են ուսումնական պլանով սահմանված որոշ առարկաների ժամաքանակի թերակատարումներ (գերակատարումներ) (19 դպրոց):
- 5) ըստ տնօրենների կողմից ներկայացված տեղեկատվության, համապատասխան որակավորմամբ ուսուցիչ չլինելու պատճառով չի դասավանդվում թվով 13 առարկա (16 դպրոց):
- 6) վարչական աշխատողների (տնօրեն, փոխտնօրեն) ուսումնական ծանրաբեռնվածության գերազանցում՝ 1 դպրոց (1 վարչական աշխատող):

7) ուսուցչի՝ համապատասխան որակավորում կամ բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ ունենալու պահանջի խախտում (այդ թվում՝ ժամանակավոր փոխարինումները, ժամանակավոր՝ մինչև մրցույթի կայանալը, ինչպես նաև մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվածները)՝ 34 դպրոց (60 ուսուցիչ՝ այդ թվում՝ ԿԳՆ-ից գործուղված 2 ուսուցիչ):

8) մանկավարժական աշխատողների (բացառությամբ՝ ուսուցիչների) պաշտոնների անվանացանկով սահմանված որակավորման պահանջների խախտում՝ 18 դպրոց (22 մանկավարժական աշխատող):

9) ուսուցչի թափուր տեղի համալրում ոչ մրցութային հիմունքներով՝ 7 դպրոց (8 ուսուցիչ, այդ թվում՝ ԿԳՆ-ից գործուղված 2 ուսուցիչ):

10) ուսուցչի թափուր տեղի մրցութային կարգի պահանջների խախտում՝ 35 դպրոց՝ (50 խախտում. հայտարարության ժամկետ, թափուր տեղը մինչև մրցույթ համալրվել է ոչ մասնագետով, մրցութային հաղթող է ճանաչվել ուսուցչի պաշտոնին չհամապատասխանող անձ):

11) ուսումնասիրությամբ ընդգրկված ժամանակահատվածում մարզի 24 դպրոցների տնօրենների թափուր տեղերի մրցութային չեն հայտարարվել (առ 23.01.2017թ.):

12) ծնողական խորհուրդների ներկայացուցիչները տվյալ դպրոցի մանկավարժական աշխատողներ են՝ 7 դպրոց:

13) 2 տարի ժամկետով (2016-2018թ.թ.) դպրոց գործուղված և որպես ուսուցիչ նշանակված անձինք չունեն մասնագիտական որակավորում՝ 2 դպրոց:

14) Քաղաքացիների, մանկավարժների՝ ՀՀ պետական մանկավարժական բուհերի նպատակային տեղերում ընդունելության վերաբերյալ դպրոցների տնօրենների ներկայացրած տեղեկատվության համաձայն, սահմանված կարգով, 2 դպրոցներում, որպես ուսուցիչ, նշանակվել են նպատակային ուղեգրով մասնագիտական կրթություն ստացած 2 անձ, սակայն վերջիններս դպրոցներում աշխատել են պայմանագրով սահմանված ժամանակահատվածից քիչ:

15) Ուսումնասիրությամբ ընդգրկված ժամանակահատվածում ՀՀ կրթության պետական տեսչության կողմից 2015 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին իրականացվել են ուսումնասիրություններ մարզի հանրակրթական ծրագրեր իրականացնող թվով 44 ուսումնական հաստատություններում: Հայտնաբերված խախտումների հետևանքները վերացնելու նպատակով 15 դպրոցների տնօրեններին և (կամ) կառավարման խորհուրդներին տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ: Դպրոցներից 7-ի կողմից հանձնարարականները չեն կատարվել:

ՀՀ Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում իրականացվող ուսումնասիրության համար ուսումնասիրությամբ ընդգրկվող ժամանակահատված է սահմանվել 2014 թվականի հունիսի 19-ից մինչև 2017 թվականի հուլիսի 10-ը: Ուսումնասիրության արդյունքները կներկայացվեն ՀՀ կրթության պետական տեսչության 2017թ. գործունեության տարեկան ամփոփ հաշվետվությունում:

Ձեռնարկված միջոցառումներ

Ուսումնասիրության արդյունքները ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարին, ՀՀ Գեղարքունիքի մարզպետին: Ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ տեղեկանքը հրապարակվել է <http://www.edu.am> կայքում:

4. ՀՀ Արմավիրի մարզի թվով 48 և ՀՀ Տավուշի մարզի թվով 27 պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթական գործընթացի ուսումնասիրություններ

Հիմքը՝

ՀՀ կրթության պետական տեսչության աշխատանքային ծրագրի 4-րդ կետը և ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի՝ 27.01.2017թ-ի N04-Ա, 04.04.2017թ-ի N25-Ա կարգադրությունները:

Նպատակը՝

«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 9-րդ մասերի պահանջների կատարումը:

Ժամկետը՝

13.02.2017թ.-03.03.2017թ. (Արմավիրի մարզ),
10.04.2017թ.-28.04.2017թ. (Տավուշի մարզ):

Ուսումնասիրությունների արդյունքներ՝

Ուսումնական հաստատություններից 50-ը միջնակարգ դպրոցներ են, 25-ը՝ հիմնական: Ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է ընդհանուր թվով 70 (47-ը՝ ՀՀ Արմավիրի մարզում, 23-ը՝ ՀՀ Տավուշի մարզում) արձանագրություն: Խախտումներ չեն հայտնաբերվել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի հ. 1 հիմնական, ՀՀ Տավուշի մարզի Աչաջրի, Արծվաբերդի, Թեղուտի միջնակարգ, Դիլիջանի հ. 2 հիմնական դպրոցներում:

Դպրոցների տնօրենների և նրանց տեղակալների պաշտոնային պարտականությունների կատարումը, դպրոցի կառավարման, մանկավարժական խորհուրդների, առարկայական մասնախմբերի, ծնողական, աշակերտական խորհուրդների գործունեությունը, ուսումնական միջավայրը, մանկավարժական աշխատողների, սովորողների վերաբերյալ բազմաբնույթ տվյալները ուսումնասիրվել են ըստ բնութագրիչների, կատարվել են դասալսումներ ներգրավված մասնագետների կողմից՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 19.08.2011թ. N 968-Ա/Ք հրամանով հաստատված ձևաթղթերի (հավելված N 2) համաձայն:

Տնօրենը սահմանված կարգով չի իրականացրել մանկավարժական կադրերի ընտրությունը (համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի) ՀՀ Արմավիրի մարզի դպրոցներից 39-ում՝ 153 խախտում, ՀՀ Տավուշի մարզի դպրոցներից 18-ում՝ 53 խախտում:

Խախտվել են ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգի պահանջները ՀՀ Արմավիրի մարզի թվով 30, ՀՀ Տավուշի մարզի թվով 13 դպրոցներում:

Ուսուցիչն ընդունվել է աշխատանքի՝ առանց ուսուցչի թափուր աշխատատեղը համալրելու համար մրցույթ հայտարարելու՝ ՀՀ Արմավիրի մարզի 11, ՀՀ Տավուշի մարզի 1 դպրոցներում:

Տնօրենի ընթացիկ ուստարվա ուսումնական ծանրաբեռնվածությունը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին՝ ՀՀ Արմավիրի մարզի 2, ՀՀ Տավուշի մարզի 1 դպրոցներում:

Դպրոցի տնօրենը՝

- չի կատարել աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև (ՀՀ Արմավիրի, Տավուշի մարզերի 1-ական դպրոցներ),

- չի հաստատել տնօրենի տեղակալների, դասղեկների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների և մանկավարժների հաշվետվությունները (ՀՀ Արմավիրի մարզի 3 դպրոցներ),

- չի իրականացրել ներքին գնահատում (ՀՀ Արմավիրի մարզի 2, Տավուշի մարզի 1 դպրոցներ),

- չի հաստատել դպրոցականների առարկայական օլիմպիադաների կազմակերպիչի և առարկայական հանձնաժողովների կազմերը (ՀՀ Արմավիրի, Տավուշի մարզերի 1-ական դպրոցներ),

- կառավարման խորհրդի հավանությանը չի ներկայացրել դպրոցի զարգացման (հեռանկարային) ծրագիրը (ՀՀ Տավուշի մարզի 1 դպրոց),

- չի հայտարարել ուսուցչի թափուր տեղի համար մրցույթ (ՀՀ Տավուշի մարզի 5 դպրոցներ),

- ուսուցչի մրցույթի հանձնաժողովի կազմը ձևավորվել է սահմանված կարգի խախտումով (ՀՀ Տավուշի մարզի 3 դպրոցներ):

Կառավարման խորհուրդը՝

- վերահսկողություն չի իրականացրել ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման նկատմամբ (ՀՀ Արմավիրի մարզի 11, ՀՀ Տավուշի մարզի 9 դպրոցներ),

- հավանություն չի տվել հաստատության զարգացման ծրագրին (ՀՀ Արմավիրի մարզի 3 դպրոցներ),

- չի քննարկել ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվությունը (ՀՀ Արմավիրի մարզի 2, ՀՀ Տավուշի մարզի 3 դպրոցներ),

- չի հաստատել իր աշխատակարգը (ՀՀ Արմավիրի մարզի 12, ՀՀ Տավուշի մարզի 8 դպրոցներ),

- չի հաստատել իր ժամանակացույցը (ՀՀ Արմավիրի մարզի 12, ՀՀ Տավուշի մարզի 9 դպրոցներ),

- չի հաստատել հաստատության կազմակերպական կառուցվածքը (ՀՀ Արմավիրի մարզի 4, ՀՀ Տավուշի մարզի 5 դպրոցներ),

- չի հաստատել դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի կարգը (ՀՀ Արմավիրի մարզի 5, ՀՀ Տավուշի մարզի 4 դպրոցներ),

- նիստերը գումարել է սահմանված կարգի խախտումով (ՀՀ Արմավիրի մարզի 5, ՀՀ Տավուշի մարզի 4 դպրոցներ),

- խորհրդի անդամի լիազորությունները սահմանված կարգով չեն դադարեցվել (**ՀՀ Արմավիրի, Տավուշի մարզերի 1-ական դպրոցներ**),

- խորհրդի անդամի առաջադրումը (հաստատումը) սահմանված կարգով չի կատարել (**ՀՀ Արմավիրի, Տավուշի մարզերի 1-ական դպրոցներ**),

- չի քննարկել ուսումնադաստիարակչական գործունեության հաշվետվությունները (**ՀՀ Արմավիրի մարզի 5, ՀՀ Տավուշի մարզի 4 դպրոցներ**),

- չի քննարկել ներքին գնահատման արդյունքները (**ՀՀ Արմավիրի մարզի՝ 6, ՀՀ Տավուշի մարզի՝ 5 դպրոցներ**),

- տնօրենի թափուր տեղի համար մրցույթ անցկանցնելու մասին որոշումը կայացրել է սահմանված ժամկետի խախտումով (**ՀՀ Արմավիրի մարզի՝ 8, ՀՀ Տավուշի մարզի 1 դպրոցներ**),

- սահմանված ժամկետում չի իրականացրել տնօրենի թափուր տեղի համար մրցույթ (**ՀՀ Արմավիրի մարզի՝ 2, ՀՀ Տավուշի մարզի՝ 3 դպրոցներ**):

Ծնողական խորհրդի կողմից կառավարման խորհրդի անդամների առաջադրումը կատարվել է սահմանված կարգի խախտումով (**ՀՀ Արմավիրի մարզի՝ 4, ՀՀ Տավուշի մարզի՝ 2 դպրոցներ**):

Խախտվել են պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի պահանջները (**ՀՀ Տավուշի մարզի 1 դպրոց**):

Սովորողի ընդունելությունը դպրոց իրականացվել է սահմանված կարգի խախտումով (**ՀՀ Արմավիրի մարզի՝ 21, ՀՀ Տավուշի մարզի՝ 7 դպրոցներ**): Սովորողի ազատումը դպրոցից իրականացվել է սահմանված կարգի խախտումով (**ՀՀ Արմավիրի մարզի 2 դպրոցներ**):

Դպրոցի՝ մանկավարժահոգեբանական եզրակացություն ունեցող 7 սովորողները վկայագրեր չունեն (**ՀՀ Տավուշի մարզի 1 դպրոց**):

200 ժամից ավել բացակայություն ունեցող սովորողը փոխադրվել է հաջորդ դասարան (**ՀՀ Տավուշի մարզի 1 դպրոց**):

Ուսպլանի խախտումներ են արձանագրվել **ՀՀ Արմավիրի մարզի՝ 8, ՀՀ Տավուշի մարզի՝ 6 դպրոցներում**:

Դպրոցական բաղադրիչը տրամադրվել է սահմանված կարգի խախտումով (**ՀՀ Արմավիրի մարզի՝ 2, ՀՀ Տավուշի մարզի՝ 3 դպրոցներ**):

«Ազգային երգ ու պար» առարկայի դասավանդումն իրականացվել է սահմանված կարգի խախտումով (**ՀՀ Տավուշի մարզի 1 դպրոց**):

Դասավանդվող առարկայի ծրագիրը սահմանված կարգով հաստատված չէ (**ՀՀ Արմավիրի մարզի՝ 3, ՀՀ Տավուշի մարզի՝ 2 դպրոցներ**):

Խախտվել է դասավանդվող առարկայի չափորոշչի պահանջը (**ՀՀ Տավուշի մարզի 1 դպրոց**):

Խախտվել է ուսումնական պլանով սահմանված սովորողների շաբաթական և (կամ) տարեկան (կիսամյակային) ծանրաբեռնվածությունը (**ՀՀ Արմավիրի մարզի՝ 3, ՀՀ Տավուշի մարզի 5 դպրոցներ**):

Դասարանում սովորողների թիվը գերազանցել է ուսպլանով սահմանված թիվը (**ՀՀ Արմավիրի, Տավուշի մարզերի՝ 4-ական դպրոցներ**):

Դպրոցը չունի հանրակրթական ծրագրերի իրականացման համար համապատասխան լիցենզիա (ՀՀ Տավուշի մարզի 1 դպրոց):

Երրորդ օտար լեզվի դասավանդումն իրականացվել է սահմանված կարգի խախտումով (ՀՀ Արմավիրի մարզի 1 դպրոց):

Կրթական գործընթացի ուսումնասիրությունների ժամանակ VII–XI դասարաններում տրվել են գրավոր աշխատանքներ «Մաթեմատիկա» և «Հայոց լեզու» առարկաներից: «Մաթեմատիկա» առարկայից՝ 4-ից 5-ական առաջադրանքներ, «Հայոց լեզու» առարկայից՝ թելադրություն (նախորդ դասարանի անցած նյութին համապատասխան):

ՀՀ Արմավիրի մարզում «Հայոց լեզու» առարկայի թելադրությանը մասնակցած 4861 սովորողներից «անբավարար» են գնահատվել 2062 (42%), «բավարար»՝ 1570 (33%), «լավ»՝ 977 (20%), «գերազանց»՝ 252 (5%), «Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքին մասնակցած 4860 սովորողներից «անբավարար» են գնահատվել 2483 (51%), «բավարար»՝ 1687 (35%), «լավ»՝ 540 (11%), «գերազանց»՝ 150 (3%):

ՀՀ Տավուշի մարզում «Հայոց լեզու» առարկայի թելադրությանը մասնակցած 2901 սովորողներից «անբավարար» են գնահատվել 1165 (40%), «բավարար»՝ 865 (30%), «լավ»՝ 724 (25%), «գերազանց»՝ 147 (5%), «Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքին մասնակցած 2920 սովորողներից «անբավարար» են գնահատվել 1118 (38%), «բավարար»՝ 1114 (38%), «լավ»՝ 470 (16%), «գերազանց»՝ 218 (8%):

Ձեռնարկված միջոցառումները՝

Ուսումնասիրությունների արդյունքները ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարին, ՀՀ Արմավիրի, Տավուշի մարզպետներին: Հայտնաբերված խախտումների հետևանքները վերացնելու նպատակով ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի կողմից դպրոցների տնօրեններին և կառավարման խորհուրդների նախագահներին տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ: Դպրոցներից ստացվող կատարողականի վերաբերյալ գրությունները ամփոփման փուլում են: Ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ տեղեկանքները, վերլուծությունները հրապարակվել են <http://www.edu.am> կայքում:

5. ՀՀ թվով 20 հատուկ դպրոցներում ուսումնասիրություններ

Հիմքը՝

ՀՀ կրթության և գիտության նախարարի հանձնարարականը և ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի 03.02.2017թ. N07-Ա կարգադրությունը:

Նպատակը՝

«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 7-րդ կետերի, 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջների կատարումը:

Ժամկետը՝

06.02.2017թ.- 10.02.2017թ.

Ուսումնասիրության արդյունքներ

Ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է ընդհանուր թվով **15** արձանագրություն: Խախտումներ չեն հայտնաբերվել Հանրապետական հ. 1, Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների, Երևանի խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների հ. 8 հատուկ կրթահամալիրներում, Երևանի հ. 16 հատուկ, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ. 1 հատուկ (օժանդակ) դպրոցներում:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է.

- տնօրենը սահմանված կարգով չի իրականացրել մանկավարժական կադրերի ընտրությունը (Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ. 2 հատուկ դպրոց (6), Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ. 11 հատուկ դպրոց (1), Երևանի հ. 12 հատուկ դպրոց (2), ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի հ. 1 հատուկ դպրոց (6), ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ. 1 հատուկ դպրոց (1), ՀՀ Լոռու մարզի Սպիտակի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ. 1 հատուկ դպրոց, ՀՀ Շիրակի մարզի Արթիկի հ. 1 հատուկ դպրոց (3). ՀՀ Շիրակի մարզի Գյումրու մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ. 3 հատուկ դպրոց (3)),

- դպրոցի կանոնադրությունը չի բխում «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջներից, դրույթներից (ՀՀ Սյունիքի մարզի Կապանի հ. 3 հատուկ կրթահամալիր),

- ուսուցչի թափուր տեղի մրցույթի հայտարարությունը հրապարակվել է սահմանված ժամկետից ուշ (ՀՀ Շիրակի մարզի Արթիկի հ. 1 հատուկ դպրոց),

- թեթև, չափավոր և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ուսուցումը դպրոցում իրականացվում է միայն թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների համար նախատեսված ուսումնական պլանով (Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ. 2 հատուկ դպրոց),

- սովորողները չունեն ՄՀ եզրակացություն (Հանրապետական հ. 2 հատուկ կրթահամալիր (5), Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ. 2 հատուկ դպրոց (6), Երևանի հ. 12 հատուկ դպրոց (1), Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների հ. 14 հատուկ դպրոց (7), Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների հ. 17 հատուկ դպրոց (4), ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ. 2 հատուկ դպրոց (3), ՀՀ Սյունիքի մարզի Կապանի հ. 3 հատուկ կրթահամալիր (6)),

- սովորողները չունեն տարածքային կառավարման պետական մարմնի կողմից տրվող կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ վկայագրեր (Հանրապետական հ. 2 հատուկ կրթահամալիր (5), Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ. 2 հատուկ դպրոց (10), Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ. 6 հատուկ դպրոց (18), Երևանի հ. 12 հատուկ դպրոց (2), Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների հ. 14 հատուկ դպրոց (11), Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների հ. 17 հատուկ դպրոց (4), ՀՀ Լոռու մարզի Սպիտակի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ. 1 հատուկ դպրոց (2), ՀՀ Սյունիքի մարզի Կապանի հ. 3 հատուկ կրթահամալիր (6)),

- սովորողների կրթական կարիքներն ըստ վկայագրերի չեն համապատասխանում դպրոցի կանոնադրությամբ սահմանված ուղղվածությանը (Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ. 2 հատուկ դպրոց (31), Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ. 11

հատուկ դպրոց (12), Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների հ. 17 հատուկ դպրոց (10)),

- սովորողները կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեն (Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ. 6 հատուկ դպրոց (17)),

- դպրոցի բոլոր դասարաններում սովորում են ինչպես թեթև, այնպես էլ չափավոր և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաներ, սակայն 2016-2017 ուստարվա ուսումնական պլանը կազմված է չափավոր և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հանրակրթական հատուկ ուսումնական հաստատության օրինակելի ուսումնական պլանին համապատասխան (Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ. 11 հատուկ դպրոց, Երևանի հ. 12 հատուկ դպրոց),

- դպրոցի բոլոր դասարաններում սովորում են ինչպես թեթև, այնպես էլ չափավոր և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաներ, սակայն 2016-2017 ուստարվա ուսումնական պլանը կազմված է թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների դասարանների ուսումնական պլանով (« Կոտայքի մարզի Աբովյանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ.1 հատուկ դպրոց)

- ուսալանի խախտումներ (Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների հ. 17 հատուկ դպրոց),

- դպրոցի սովորողն, համաձայն լիազոր մարմնի վկայագրման, ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք: Ըստ բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնի եզրակացության նա կարող է սովորել միայն հանրակրթական առարկայական ծրագրով (« Արագածոտնի մարզի Աշտարակի հ. 1 հատուկ դպրոց (2), « Արմավիրի մարզի Արմավիրի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ. 1 հատուկ դպրոց (2), « Կոտայքի մարզի Աբովյանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ.1 հատուկ դպրոց (1)),

- խախտվել է սովորողների շաբաթական ծանրաբեռնվածությունը (« Արագածոտնի մարզի Աշտարակի հ. 1 հատուկ դպրոց),

- 2016-2017 ուստարում 5-րդ, 7-րդ, 9-րդ դասարանների թվով 3 սովորողներ ներառվել են 6-րդ դասարանի համակազմում (« Լոռու մարզի Սպիտակի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ. 1 հատուկ դպրոց):

Ձեռնարկված միջոցառումները

Ուսումնասիրությունների արդյունքները ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարին: Ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ տեղեկանքը հրապարակվել է <http://www.edu.am> կայքում: Հայտնաբերված խախտումների հետևանքները վերացնելու նպատակով ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի կողմից ուսումնական հաստատությունների տնօրեններին տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ: Ուսումնական հաստատություններից ստացվող կատարողականի վերաբերյալ գրություններն ամփոփման փուլում են:

6. ՀՀ ռուսերենով ուսուցմամբ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող կազմակերպություններում ուսումնասիրություններ

Հիմքը՝

ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 13.04.2017թ. հանձնարարականը և ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի՝ 10.05.2017թ-ի N45-Ա կարգադրությունը:

Նպատակը՝

«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների կատարումը:

Ժամկետը՝

15.05.2017թ.- 19.05.2017թ.

Ուսումնասիրության արդյունքներ

Ուսումնական հաստատություններից 21-ը՝ հիմնական, 11-ը՝ ավագ, 5-ը՝ միջնակարգ և 4-ը՝ ոչ պետական դպրոցներ են: Ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է ընդհանուր թվով **13** արձանագրություն:

Ուսումնասիրությամբ պարզվել է.

ՀՀ ռուսերենով ուսուցմամբ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող թվով 40 կազմակերպությունների ռուսերենով ուսուցմամբ դասարաններում սովորում են թվով 4466 սովորողներ. 1891-ը՝ տարրական դպրոցում, 2105-ը՝ միջին դպրոցում և 470-ը՝ ավագ դպրոցում: Ռուսերենով ուսուցմամբ աշակերտների ամենամեծ թիվը Երևանի հ. 55 հիմնական դպրոցում է՝ 366 սովորող, որը նշված ցուցանիշի 9% է: ՀՀ ռուսերենով ուսուցմամբ դասարաններ ընդունվել են հետևյալ հիմքերով.

- սովորողի ծնողը օտարերկրյա քաղաքացի է՝ 2661 սովորող,
- սովորողի ծնողի օրինական ներկայացուցիչը օտարերկրյա քաղաքացի է՝ 237 սովորողներ (Երևանի հ. 55 հ/դ՝ 47 դեպք, Արմավիրի հ. 5 հ/դ՝ 49 դեպք, Երևանի հ. 7 հ/դ՝ 38 դեպք, Վաղարշապատի հ. 9 հ/դ՝ 27 դեպք, Վաղարշապատի հ. 5 ա/դ՝ 17 դեպք, Երևանի հ. 8 հ/դ՝ 15 դեպք),
- սովորողի ծնողը երկքաղաքացի է՝ 24 սովորող,
- սովորողի ծնողի օրինական ներկայացուցիչը երկքաղաքացի է՝ 1 սովորող,
- սովորողի ծնողը չունի քաղաքացիություն՝ 19 սովորող,
- սովորողի ծնողը ազգային փոքրամասնության ներկայացուցիչ է՝ 558 սովորող,
- սովորողը ազգային փոքրամասնության ներկայացուցիչ է՝ 454 սովորող,
- սովորողի ծնողի օրինական ներկայացուցիչը ազգային փոքրամասնության ներկայացուցիչ է՝ 10 սովորող,
- սովորողն առնվազն 5 տարի անընդմեջ օտար լեզվով ուսուցմամբ դպրոցում (դասարանում) է սովորել՝ 332 սովորող,
- սովորելու է մինչև տվյալ ուստարվա ավարտը՝ 66 սովորող,
- սովորելու է մինչև հաջորդ ուստարվա ավարտը՝ 28 սովորող,
- պատճառները հիմնավոր չեն՝ 37 սովորող:

Ինչպես վերը նշվել է, ռուսերենով ուսուցմամբ դասարանում սովորելու համար հիմք է հանդիսացել նաև սովորողի ծնողի օրինական ներկայացուցչի ազգային փոքրամասնությանը պատկանելը, մինչդեռ ՀՀ կրթության և գիտության նախարարի 24.11.2010թ. N 1640-Ն հրամանով հաստատված «ՀՀ հանրակրթական ուսումնական

հաստատություն սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգ»-ով նման պահանջ նախատեսված չէ:

Սովորողի ընդունելությունը դպրոց իրականացվել է սահմանված կարգի խախտումով. 37 սովորող 11 դպրոցներում (Երևանի հ. 7 հ/դ (4), Երևանի հ. 8 հ/դ(2), Երևանի հ. 35 հ/դ (8), Երևանի հ. 124 հ/դ(2), Երևանի հ. 164 հ/դ (1), Երևանի հ. 176 հ/դ(1), Վերին Դվինի մ/դ (12), Դիմիտրովի մ/դ (1), Արզնիի մ/դ (1), Վաղարշապատի հ. 9 հ/դ (1), «Ուսմունք» դպրոց (4)):

Սովորողի ուսուցումը սահմանված կարգի խախտումով իրականացվում է ռուսերենով ուսուցմամբ դասարանում. 33 սովորող 11 դպրոցներում (Երևանի հ. 7 հ/դ (4), Երևանի հ. 8 հ/դ (2), Երևանի հ. 35 հ/դ (7), Երևանի հ. 69 հ/դ (1), Երևանի հ. 124 հ/դ(1), Երևանի հ. 164 հ/դ (1), Վերին Դվինի մ/դ (9), Դիմիտրովի մ/դ (2), Արզնիի մ/դ (1), Վաղարշապատի հ. 9 հ/դ (1), «Ուսմունք» դպրոց (4)):

Սովորողի ուսուցումը սահմանված կարգի խախտումով իրականացվել է ռուսերենով ուսուցմամբ դասարանում, սակայն արդեն լրացել է նրա 5 տարի անընդմեջ ռուսերենով ուսուցմամբ դասարանում սովորելու ժամկետը. 9 սովորող 4 դպրոցներում (Երևանի հ. 176 հ/դ (2), Վերին Դվինի (3), Դիմիտրովի մ/դ (2), Մ. Մաշտոցի անվան երկարօրյա ուսումնական համալիր (2)):

ՌԴ-ից սովորողը վերադարձել է ուստարվա առաջին կիսամյակում (ծնողները ՀՀ քաղաքացիներ են) և պետք է նշված դասարանում սովորեր մինչև տվյալ ուստարվա ավարտը, մինչդեռ հաջորդ ուսումնական տարում ևս նրա ուսուցումը կազմակերպվել է ռուսերենով ուսուցմամբ դասարանում. 6 սովորող 3 դպրոցներում (Երևանի հ. 69 հ/դ (1), Դիմիտրովի մ/դ (3), Մ. Մաշտոցի անվան երկարօրյա ուսումնական համալիր (2)):

Ձեռնարկված միջոցառումներ

Ուսումնասիրությունների արդյունքները ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարին, ՀՀ Արարատի մարզպետին, Երևանի քաղաքապետին: Հայտնաբերված խախտումների հետևանքները վերացնելու նպատակով ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի կողմից ուսումնական հաստատությունների տնօրեններին տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ: Ուսումնական հաստատություններից ստացվող կատարողականի վերաբերյալ գրություններն ամփոփման փուլում են: Ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ տեղեկանքը հրապարակվել է <http://www.edu.am> կայքում:

Հետադարձ կապ

ՀՀ Արարատի մարզպետից ստացված գրության համաձայն Վերին Դվինի և Դիմիտրովի միջնակարգ դպրոցներում սովորողների ընդունելության իրավական հիմքերի ուսումնասիրության ընթացքում արձանագրված խախտումները քննարկվել են մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում: Տնօրեններին հանձնարարվել է մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը վերացնել հայտնաբերված խախտումները և աշակերտների ընդունելության ժամանակ խստորեն առաջնորդվել սահմանված կարգով:

7. ՀՀ Տավուշի մարզի Բերդի և ՀՀ Արագածոտնի մարզի Արագածի արհեստագործական պետական ուսումնարաններում տեսչական ստուգումներ

Հիմքը՝

ՀՀ կրթության պետական տեսչության 2017 թվականի աշխատանքային ծրագիրը, ՀՀ կրթության պետական տեսչության պետի 30.12.2016թ. N 68-Ա կարգադրությամբ հաստատված 2017թ. ստուգումների ժամանակացույցը և 02.05.2017թ. N03-Ա, 05.05.2017թ. N05-Ա հանձնարարագրերը:

Նպատակը՝

«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջների կատարումը:

Ժամկետը՝

05.05.2017թ.-19.05.2017թ. (ՀՀ Տավուշի մարզի Բերդի արհեստագործական պետական ուսումնարան),

11.05.2017թ.-24.05.2017թ. (ՀՀ Արագածոտնի մարզի Արագածի արհեստագործական պետական ուսումնարան):

Ստուգման արդյունքները՝

ՀՀ Տավուշի մարզի Բերդի, ՀՀ Արագածոտնի մարզի Արագածի արհեստագործական պետական ուսումնարաններում կրթության զարգացման պետական ծրագրի իրականացման, պետական կրթական չափորոշիչների կիրառման, կրթության իրավունքի, կրթական համակարգի սոցիալական երաշխիքների, կրթության որակի բարձրացման և կրթական ծրագրերի յուրացման ապահովման, կրթական ծրագրերի իրականացման արդյունավետության գնահատման, կրթության որակի ապահովման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնելու նպատակով իրականացվել են տեսչական ստուգումներ: Ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջան է ընդունվել 2014 թվականի հունիսի 1- ից մինչև ստուգումը սկսելու օրը:

Ստուգումների արդյունքում Արագածի արհեստագործական պետական ուսումնարանում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է ակտ:

Ստուգման ընթացքում պարզվել է.

1) 2015թ. սովորողն ընդունվել է ուսումնարան՝ չունենալով առնվազն հիմնական կրթություն:

2) Ուսումնարանի 2014թ. և 2015թ. սովորողների ընդունելության ընդունող հանձնաժողովները ստեղծվել են սահմանված ժամկետի խախտումով:

3) Ուսումնարանում բացակայում են պետական կրթական չափորոշիչների հիման վրա մշակված և հաստատված առարկայական ծրագրերը:

4) 0214.04.03.4 «Գորգագործություն և ժանյակագործություն» մասնագիտության գծով չեն կնքվել արտադրական պրակտիկայի անցկացման պայմանագրեր:

5) 2014, 2015, 2016 թ.թ. պետական ամփոփիչ ատեստավորման անցկացման ժամկետները չեն համապատասխանում մասնագիտությունների ուսումնական պլաններով նախատեսված ժամկետներին:

6) Հրամանագրված չէ ուսումնական պլանի և առարկայական (մոդուլային) ծրագրերի պահանջները ամբողջովին կատարած ուսանողներին պետական ամփոփիչ ստուգման թույլատրելը:

7) Պետական որակավորող հանձնաժողովին չեն ներկայացվել.

ա) ուսանողների կողմից ուսումնական պլանով նախատեսված առարկաների, պրակտիկաների ամփոփիչ ստուգման վերաբերյալ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալի կողմից հաստատված տեղեկանքը,

բ) տնօրենի հրամանի քաղվածքը՝ ուսանողներին պետական քննությանը թույլատրության վերաբերյալ:

8) Պետական որակավորող հանձնաժողովների նախագահների կողմից հաշվետվություններ չեն ներկայացվել կրթության պետական կառավարման լիազորված մարմին: Հաշվետվությունները չեն քննարկվել ուսումնարանի խորհրդում:

9) Տնօրենի հրամանով չի հաստատվել պետական որակավորող հանձնաժողովի որոշմամբ շրջանավարտներին համապատասխան որակավորում և դիպլոմներ շնորհումը:

10) Դիպլոմների ստացման և բաշխման հաշվառման մատյանը չի պարունակում կարգով սահմանված բոլոր տվյալներ: Ուսումնարանում գործածության մեջ գտնվող մատյանում չեն լրացվում՝

ա) մասնագիտության անվանումը և որակավորումը,

բ) պետական քննական հանձնաժողովի արձանագրության տարին, ամսաթիվը:

11) 2016 և 2017 թվականներին տարբեր պատճառներով ինքնակամ ուսումը թողած անձանց վերաբերյալ տրված հրամաններում հեռացման փոխարեն ձևակերպվել է տարկետում:

12) Ուսումնարանից հեռացված 4 անձանց ուսանողական իրավունքը ուսումնառած կիսամյակի սկզբից վերականգնելու փոխարեն վերականգնել են ուսումնառությունն անավարտ թողած փուլում:

13) Ուսումնարանում չեն ապահովվել ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամաններով հաստատված նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների 5-րդ գլխով (*Պահանջներ նախնական մասնագիտական (արհեստագործական) հիմնական կրթական ծրագրի իրականացման պայմանների նկատմամբ*) սահմանված պահանջների կատարումը: Մասնավորապես՝

ա) անձը (ավարտել է Արագածի արհեստագործական պետական ուսումնարանը՝ «Համակարգիչների շահագործում» մասնագիտությամբ և ստացել է համակարգչային օպերատորի մասնագիտական որակավորում:) ուսումնարան է ընդունվել 01.09.2016թ. որպես «Համակարգիչների շահագործում» մասնագիտության մասնագիտական առարկաների դասախոս: Վերջինս «Համակարգիչների շահագործում» մասնագիտության մասնագիտական առարկաները դասավանդելու համար չունի համապատասխան կրթություն և մասնագիտական աշխատանքի փորձ:

բ) ուսուցանվող մասնագիտությունների ուսումնական պլաններում. արտադրական պրակտիկային հատկացված ժամկետները (շաբաթների թիվը) չեն

համապատասխանում պետական կրթական չափորոշիչներով սահմանված ժամկետներին (շաբաթների թվին),

գ) բացակայում են պրակտիկաների ուսումնական ծրագրերը,

դ) բացակայում են մասնագիտությունների ուսումնական պլաններով նախատեսված առարկաների և մոդուլների ծրագրային բովանդակությանը համապատասխանող ուսումնական, մեթոդական և տեղեկատվական նյութերը,

ե) բացակայում են մասնագիտությունների ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխանող ուսումնական կաբինետները, լաբորատորիաներն ու արհեստանոցները:

14) 0723.03.02.4 «Կարի արտադրության տեխնոլոգիա» և 0611.01.04.4 «Համակարգիչների շահագործում» մասնագիտությունների ուսումնական պլանները չեն համապատասխանում պետական կրթական չափորոշիչներին:

15) Ուսումնարանի կառավարման խորհրդի նախագահ, նախագահի տեղակալ և քարտուղար ընտրելու վերաբերյալ կառավարման խորհրդի նիստը արձանագրված չէ: Կառավարման խորհուրդը չունի իր կողմից հաստատված աշխատակարգ, չի քննարկել և հաստատել ուսումնարանի ռազմավարական ծրագիրը, ուսումնարանի տնօրենի և մանկավարժների գնահատման իրականացմանն ուղղված միջոցառումները, ուսումնարանում ուսուցանվող յուրաքանչյուր մասնագիտության ուսումնական պլանները և առարկայական ծրագրերի նախագծերը, չի քննարկել և առաջադրել պետական ամփոփիչ ստուգման հանձնաժողովների նախագահների թեկնածությունները, չի հաստատել ուսումնարանի ստորաբաժանումների կանոնակարգերը, ներքին կարգապահական կանոնները, չի սահմանել ուսումնարանում գործող մանկավարժական խորհրդի և ուսումնամեթոդական խորհրդի կազմը, իրավասությունը և գործունեության կարգը:

Ձեռնարկված միջոցառումներ

Ակտի մեկ օրինակը օրենքով սահմանված կարգով և ժամկետում տրվել է հաստատության տնօրենին: Հայտնաբերված խախտումների հետևանքները վերացնելու նպատակով, «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն, ՀՀ կրթության գլխավոր պետական տեսչի կողմից հաստատության տնօրենին և խորհրդի նախագահին տրվել է կատարման համար պարտադիր հանձնարարականներ: Ստուգումների արդյունքները ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարին: Ստուգումների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները հրապարակվել են <http://www.edu.am> կայքում:

8. Դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման գործընթացի նկատմամբ վերահսկողություն (առկա վիճակ)

Հիմքը՝

ՀՀ կրթության պետական տեսչության պետի՝ 13.02.2017թ. N 09-Ա կարգադրությունը:

Նպատակը՝

«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 9-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների ապահովումը:

Ժամկետը՝

15.02.2017թ.-15.03.2017թ.

Ուսումնասիրության արդյունքները՝

2017 թվականի առաջին քննաշրջանում դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննություններին մասնակցելու համար դիմել են թվով 13 դրսեկներ հիմնական կրթության վկայական և 56-ը՝ միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար:

Վերահսկողության արդյունքներից ելնելով՝ ներկայացվել են դիտարկումներ դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունների գործընթացի վերաբերյալ.

1) ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 19.01.2017թ. N 17-Ա/2 հրամանով հաստատված «2017 թվականի՝ դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման աշխատակարգ»-ի (այսուհետ՝ աշխատակարգ) 1-ին կետի համաձայն՝ քննական թեստերը կազմում է ԳԹԿ-ն՝ առնվազն 4 թեստ յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 20 բալային համակարգով, մինչդեռ քննական յուրաքանչյուր առարկայի համար կազմվել է 2-ական, որոշ դեպքերում՝ 1-ական թեստ,

2) աշխատակարգի 5-րդ կետի համաձայն՝ առարկաների տարեկան գնահատականները նշանակվում են՝ 20 բալային համակարգից գնահատականները վերածելով 10 բալային համակարգի, ինչը ենթադրում է, որ թեստերը բաղկացած պետք է լինեն առնվազն 10 առաջադրանքներից: Մինչդեռ, ԳԹԿ-ի կողմից բնագիտական առարկաների թեստերը կազմվել են 7 կամ 10 առաջադրանքից («Քիմիա»՝ 7, «Կենսաբանություն»՝ 10, «Աշխարհագրություն»՝ 10),

3) թեստերի պատասխանների հետ չեն կցվել գնահատման սանդղակները,

4) թեստերում կրկնվել են նախորդ քննաշրջանի առաջադրանքները (նույնիսկ 7 կամ 10 առաջադրանքների դեպքում առնվազն երկուսը կրկնվել են),

5) չնայած «Տեխնոլոգիա» առարկան դասավանդվում է I-VII դասարաններում, սակայն այն ներառվել է հիմնական կրթության վկայական ստանալու համար քննությունների կազմակերպման ժամանակացույցով սահմանված առարկայացանկում:

Ձեռնարկված միջոցառումներ

Ուսումնասիրությունների արդյունքները ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարին: Առաջարկվել է՝

1. քննական թեստերը կազմել աշխատակարգի դրույթներին համապատասխան,
2. քննական թեստերը կազմել առնվազն 10 առաջադրանքից, և նախորդ քննաշրջանի առաջադրանքները չկրկնել,
3. քննական թեստերի պատասխանների հետ կցել նաև գնահատման սանդղակները,
4. «Տեխնոլոգիա» առարկան հանել հիմնական կրթության վկայական ստանալու համար քննությունների առարկայացանկից:

Արդյունքում՝ 2017թ. դրսեկության ձևով (էքստեն) ավարտական քննությունների երկրորդ քննաշրջանի (մայիս-հունիս քննաշրջան) թեստերը կազմվել են 4 տարբերակով, 20-ական առաջադրանքներով: Առաջադրանքները չեն կրկնվել, գնահատման սանդղակները կցվել են, իսկ քննությունների կազմակերպման ժամանակացույցով սահմանված առարկայացանկից «Տեխնոլոգիա» առարկան հանվել է:

9. Ուսումնական հաստատությունների կրթական ծառայությունների արդյունավետության գնահատում, գործունեության վերլուծություն

Հիմքը՝

ՀՀ կրթության պետական տեսչության՝ 2017 թվականի աշխատանքային ծրագիրը:

Նպատակը՝

«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների կատարման ապահովումը:

Ժամկետը՝

2017թ. 1-ին կիսամյակ:

Ուսումնասիրությունների արդյունք՝

ՀՀ Արմավիրի մարզի թվով 48, ՀՀ Տավուշի մարզի թվով 27 հանրակրթական պետական ուսումնական հաստատություններում իրականացված կրթական գործունեության ուսումնասիրությունների արդյունքում կազմված վերլուծությունները (հավելվածներով) հրապարակվել են <http://www.edu.am> կայքում:

10. Դիմումներում, բողոքներում բարձրացված խնդիրների ուսումնասիրություն կամ ստուգում

Նպատակը՝

«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի կատարումը:

Ժամկետը՝

2017 թվականի I կիսամյակ:

Դիմումներն ըստ մարզերի և ուսումնական հաստատությունների

<p>ՀՀ մարզեր, Երևան քաղաք</p>	<p>Դիմումների ընդհանուր թիվը (ներառյալ «Թեժ գիծը»)</p>	<p>Դիմումների թիվն ըստ ուսումնական հաստատությունների</p>
-------------------------------	--	--

Երևան	32	Երևանի հ. 3 ա/դ, Երևանի հ. 6 հ/դ, Երևանի հ. 7 հ/դ, Երևանի հ. 11 հ/դ, Երևանի հ. 14 հատուկ/դ, Երևանի հ. 21 հ/դ, Երևանի հ. 37 հ/դ, Երևանի հ. 38 հ/դ, Երևանի հ. 56 հ/դ (2 դիմում), Երևանի հ. 80 հ/դ, Երևանի հ. 87 մ/դ, Երևանի հ. 88 հ/դ, Երևանի հ. 105 ա/դ, Երևանի հ. 106 հ/դ, Երևանի հ. 114 ա/դ, Երևանի հ. 122 հ/դ (2 դիմում), Երևանի հ. 128 հ/դ, Երևանի հ. 130 հ/դ, Երևանի հ. 133 հ/դ, Երևանի հ. 150 հ/դ, Երևանի հ. 160 հ/դ, Երևանի հ. 166 հ/դ, Երևանի հ. 180 հ/դ, Երևանի հ. 182 հ/դ, Երևանի հ. 186 հ/դ, Երևանի հ. 195 ա/դ, Երևանի հ. 197 հ/դ, Երևանի կոյրերի երեկոյան մ/դ, «Ուսմունք» կրթահամալիր, «Անգելս պարտեզ» կրթահամալիր
Արարատ	6	Արարատի հ. 1 մ/դ, Այգեստանի մ/դ (2 դիմում), Այնթապի հ. 2 մ/դ, Լուսաշողի մ/դ, Սիսավանի մ/դ
Տավուշ	3	Դեղձավանի հ/դ ,Վերին Կարմիրաղբյուրի մ/դ, Կողբի հ.2 մ/դ
Կոտայք	5	Աբովյանի հ.2 հ/դ, Աբովյանի հ.5 հ/դ, Աբովյանի հ.8 հ/դ, Առինջի մ/դ. Չարենցավանի հ. 1 ա/դ
Լոռի	8	Ախթալայի թիվ 1 մ/դ, Վանաձորի հ.11 ա/դ, Անտառամուտի հ/դ, Վանաձորի հ. 4 հ/դ, Վանաձորի հ.15 հ/դ, Դսեղ համայնքի ՆՈւՀ (2 դիմում), Լեռնավանի մ/դ
Արմավիր	5	Ակնաշենի մ/դ, Առատաշենի մ/դ, Արմավիրի հ. 6 հ/դ, Եղեգնուտի մ/դ, Ծիածանի մ/դ,
Գեղարքունիք	10	Գագարինի մ/դ (2 դիմում), Կարմիրգյուղի մանկապարտեզ, Կարմիրգյուղի հ. 1 մ/դ, Կարմիրգյուղի հ. 2 մ/դ, Մարտունու ա/դ, Վաղաշենի մ/դ (3 դիմում), Վարդաձորի մ/դ
Արագածոտն	2	Բյուրականի մ/դ, Եղիպատրուշի մ/դ
Սյունիք	2	Գորիսի մանկապարտեզներ, Դարբասի մ/դ
Վայոց Ձոր	1	Արտաբույնքի մ/դ
Շիրակ	6	Արթիկի հ.4 հ/դ, Գեղանիստի մ/դ, Գյումրու տնտեսագիտական վարժարան, Գյումրու հ. 23 հ/դ, Գյումրու հ. 43 հ/դ, Հառիճի մ/դ
Ընդամենը	80	

Դիմումներում բարձրացված (նշված) հարցերը	ԵՐԵՎԱՆ	ԱՐԱԳԱՇՈՏԱՆ	ԱՐԱՐԱՍ	ԱՐՄՄՎԿԻՐ	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	ԼՈՒԻ	ԿՈՏԱՅՔ	ՇԻՐԱԿ	ՍՅՈՒՆԻՔ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՏԱՎՈՒՇ	ԸՆԴԱՆՆԵՐ
Գործատու-աշխատող հարաբերություններ			1					1				2
Տնօրենի կողմից թույլ տրված անօրինականություններ	6		1	1	3	6		2	1	1	1	22
Դպրոցի վերանորոգման հարց								1				1
Դպրոցում տիրող անառողջ մթնոլորտ	3		1		1							5
Տնօրենի դիպլոմի իսկության կասկած						1						1
Բողոք դպրոցի ուսուցչի դեմ	3		2				2	1			1	9
Սովորողի բացակայությունների վերաբերյալ		1										1
Սովորողի տնային ուսուցման կազմակերպման վերաբերյալ	1											1
Դրամահավաքություն /դպրոցում/	23		2	4		1	4	1				35
Տնօրենի՝ նույն դպրոցում աշխատող հարազատների վերաբերյալ				1		2						3
Տնօրենի վատ, անարդյունավետ աշխատանք			1		1							2
Տնօրենի կողմից կադրերի ոչ ճիշտ ընտրություն	1			1	1	4		1		1	1	10
Տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթի անցկացման հարց		1									1	2
Տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթի անցկացման կարգի խախտում	1											1
Ուսուցիչ-սովորող փոխհարաբերություններ		1		1								2
Մանկապարտեզում տնօրենի խախտումով նշանակում					1							1
Մանկապարտեզի վարձավճարների հարց									1			1
Կարճված դիմում	5	1	3	3	1						2	15
Մասամբ կարճված դիմում								1				1

Այլ տվյալներ՝	
Դիմողը չի հայտնաբերվել	4
Դիմողը բավարարվել է դիմումի նախնական վարույթից, և դիմումին ընթացք չի տրվել	2
Դիմողին ուղարկվել է պատասխան գրություն	19
Դիմումում նշված անձինք հրաժարվել են դիմումն իրենց կողմից գրված լինելու փաստից	3
Դիմումում նշված փաստարկները մասամբ են համապատասխանում իրականությանը	9
Դիմումում նշված փաստարկները չեն համապատասխանում իրականությանը	40
Դիմումն անստորագիր է	35
Դիմումում բարձրացված հարցերը դուրս են ՀՀ ԿՊՏ լիազորությունների շրջանակներից	2

11. Համագործակցություն ՁԼՄ-ների հետ

Նպատակը՝

ՀՀ կրթության պետական տեսչության գործունեության հրապարակայնության, թափանցիկության ապահովումը:

Ժամկետը՝

2017 թվականի 1-ին կիսամյակ:

Ձեռնարկված միջոցառումները

- ՀՀ կրթության պետական տեսչության կողմից իրականացված ուսումնասիրությունների և ստուգումների արդյունքում կազմված տեղեկանքները, վերլուծություններն ու հաշվետվությունները հրապարակվել են <http://www.edu.am> կայքում:

- Տեսչության 2017թ. փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, հունիս ամիսների գործողությունների ժամանակացույցները հրապարակվել են, <http://www.edu.am> կայքում:

12. Կազմվել և օրենքով սահմանված ժամկետում (23.02.2017թ.) հրապարակման է ներկայացվել ՀՀ կրթության պետական տեսչության՝ 2016 թվականի տարեկան հրապարակային հաշվետվությունը: Հաշվետվությունը հրապարակվել է <http://www.edu.am> կայքում:

Վերլուծության և գնահատման բաժին